

ՀՏԴ. 809. 198. 1

Անգլաբանական հաղորդում

ՄԻՋՊԳՎԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՍԿԻՏԱԿԱՆ ՈՒԹԵՆՈՐԻ ԳԵՏԱԿԱՆՈՎԸ

Ս. Ա. Մինայան

2008թ. օգոստոսի 15-18 Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում պատշաճ մակարդակով ու համապատասխան միջավայրում (պետքույնից կրթության ու գիտության նախարարության նախաժողովում ծախսերով) կայացավ Միջազգային հայերենագիտական ութներորդ գիտաժողովը, որը համապատասխան գեղեցկումներով ընդգրկված էին տարբեր տեղերի գիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատող քաններկու անձնավորություն՝ Նրան (ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտ, Լավրենտի Հովհաննիսյան, Նազիկ Հովհաննիսյան, Մելադա Արաբելյան, Հայկանուշ Մանուկյան և ուրիշներ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Հասմիկ Պետրոսյան, Խ. Արզումանի անվ. Հայկական պետական համալսարան, Աշոտ Դալստյան, Ժեն (Ժենի համալսարան, Ռեմի (Վրեդա), Հոլանդիա (Լեյդենի համալսարան, Հրաչ Մարտիրոսյան), Հայաստան (Գավառի պետական համալսարան, Վիկտոր Կատվալյան), Արցախ (Ստեփանակերտի պետական համալսարան, Արսեն Սարգսյան, Գուրգեն Բադրալարյան և ուրիշներ, Մ. Մաշտոցի անվ. պետ. համալսարանում ընդգրկված համալսարան, Լուսինե Մարգարյան): Գիտաժողովի կազմկոմիտեն էր՝ ինչպես, ի. Բ.՝ Նախագահ, Լ.Բ.Ը. Լ.Բ. Լ.Բ. Նախագահ, Դալստյան Ս. Վ. Արդ՝ ռեկտոր, պ. գ. թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լ. Ը. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվաբանության ինստիտուտի տնօրեն, պ. գ. թ., պրոֆեսոր, Սարգսյան Լ. Ը.՝ պատասխանատու քաղաքագետ և գիտաժողովին վերաբերող ամեն տիպի աշխատանքների նախաձեռնող, Արդ՝ բան. դեկան, պ. գ. թ., դոցենտ, Բադրալարյան Ս. Ը. Արդ՝ հայոց լեզվի և նրա դաս. մեթ. ամբիոնի վարիչ, պ. գ. թ., պրոֆեսոր, Վրեդա Ռ., Մարտիրոսյան Հ., Արաբելյան Մ.: Աշխատանքի համար նախատեսված էր լանդսկապով ու ծրագրով: Միջազգային հայերենագիտական ութներորդ գիտաժողովն ունեցավ «Հայոց լեզվի պատմության» մի շարք հարցերի նվիրված գեղեցկումների երկու լիագումար նիստ, որի առաջինը, ի պատիվ Արցախում առաջին անգամ կայացող այդ գիտաժողովի, իրագրվեց Արցախի Ազգային ժողովի նիստերի դահլիճում, իսկ հաջորդը՝ Արդ՝-ում: Օգոստոսի 18-ի լիագումար նիստում ամփոփվեցին գեղեցկումների արդյունքները: Այդ գիտաժողովի գեղեցկումները, դրական գնահատականի արժանանալով, երաշխավորվեցին տարագրվելուն, (որը կատարվեց ժամանակին): Աշխատանքը գլուխկոցվեց նաև տնտեսական վայրերի գիտարկումներ իրացնող Էսթոնիայից ընդգրկված ու պաշտոնական հանդիպումներով: Այս իրողությունը համընկավ տվյալ տիպի գիտաժողովների գործառնության քանակին զանազան: Մեր հողվածով նպատակ ունենալ անդրադառնալ այդ գեղեցկումների բնույթին. որտեղ, հավիտ պատշաճ, ամփոփ ձևով իրադարձվել են «Հայոց լեզվի պատմության հարցեր» ժողովածուում (1): Այս վեց գործով Արցախում իրագրվեց հայոց լեզվին նվիրված բարձրագույն առարկություն: Արժեք է հիշել հայոց լեզվի մեծ նվիրյալ Ս. Գ. Արաքսյանի հետևյալ խոսքը. «Մենք գալիս ենք ժողովուրդների պատմության վաղաճակյա ժամանակներից, անցել ենք հազարամյակների պատմական ուղի. դա ձեռքբերումների ու կորուսումների, հաղթանակների ու պարտությունների, հույսի ու մարադումների ուղի է, և մենք լինում «գործածում ենք», բայց պատմության մեջ ունեցել ենք մեր տեղը, կատարել ենք մեր դերը, արժանապատվությամբ ենք հասնել 20-րդ դար և մուտք գործել 21-րդը: Շնորհիվ մեզ հետևակից կամ նույնիսկ ազվել ու ժամանակներում երևան եկած ու մեզնից ուժեղ ժողովուրդներ վերազել են պատմության թատերաբեմից կամ ֆիգիլակապես, կամ, ավելի հաճախ, ձուլվել են օտարների» վերանայով որպես ինքնուրույն ժողովուրդ: Ձուլվել են, քանզի չեն պահպանել, չեն պաշտպանել իրենց լեզուն, չեն գիտակցել, որ լեզվի կորուստն ազգի կորուստն է:

Մեր իմաստուն նախնիներն առանձնակի ուշադրություն էին դարձնում մայրենի լեզվի բազալի դերին՝ ազգաբանագիտության, ազգաշարժառնության սուրբ գործում: Նրանք քաջ գիտակցում էին

Որ գործից հետո

Միշտ էլ լեզուն են մարտադարձում հանում:

Նվիրել չի կարող ոչ մի գործ անել:

Լեզուն է անում:

Հայ ազգի պահպանության, պաշտպանության ու գոյատևման, ազգային կյանքի լայնահուն քաղաքական, նրա պատմական առաքելության լիարժեք իրականացման գործում մայրենի լեզվի բազալի դերի խոր գիտակցումն էր, որ միջց մեծն Մեծարա Մաշտոցին՝ ստեղծելու հայոց գիրը:

հիմնադրելու հայ դպրոցները: Գրքերի գլուխը հայ մշակույթի հետագա զարգացման, մեր ազգի անցնելիք մեծ ճանապարհի սկիզբն էր» (2, էջ 7-8):

Եվ ահա սկզբնավորված այդ մեծ ուղու շրջադարձային լուսաբաշտ կենտրոնից մեկը Միջագայինի հայերենագիտական գիտահոլովն է, որի ութնորդը, ինչպես նշեցինք, Արցախում էր: Այդ գիտահոլովում կայացած գեկույցներում տարածմանակա ու համաժամանակյա տնտեսկյուններով բազմակողմանիորեն քննարկվել են հայոց լեզվի տարբեր մակարդակների գործուն հարցեր, որոնք, բառանհրաժեշտությամբ, հիմնավորված էին համապատասխան գիտական աղբյուրներով (առաջ քաշված նորարական վարկածներում ակնհայտ էին մասնակի փոխակներ, որոշ լեզմաների ծաղկումն ընդգրկումներ, մի քանի գեկույցումների բնագրային տեղափոխում, գիտական աղբյուրների ոչ նշումներ, բանավոր գեկույցում գործածված կատակցությունների անհարկի փոխանցում գրավոր խոսքի մեջ և այլն, որոնք, սակայն, չլին ստվերում հարցերի կարևորությունները): Տպագրված գեկույցների լեզմաների կենսից ավելին վերաբերում են բառացիություններ, ուր բազմակողմանիորեն շոյադիվում են հազարամյակների պատմությունն ունեցող հայերենի լեզվական հարստությունները, դրանց շուրջ եղած գիտական արժեքները նվաճումներն ու դեռևս ուշադրության կարոտ բացերը:

Հայերենի հնչյունաբանական բաժինն է առնչվում Ռեմի Վիդերասի «Հնդեվրոպական նախալեզվի «ո» բաղաձայնը հայերենում. մետատեղատի (դրափոխություն-Մ.Մ.) թացառություններ» լեզման հենված բառագիտության ստուգաբանական, համեմատական և աշխատանքների վրա՝ *արոնք, անծոն, գանգուր* բառերի ասիմաներում: Նույն բաժնից հնչեղանգի վերիատույթային ենթաբաժինն է վերաբերում Լուսինե Վանյանի «Ռիթմիկ կառույցների հիմնական առանձնահատկությունները ժամանակակից հայերենում» փորձարարական աշխատանքների ամփոփված շարադրանքը: Յ հնչյունի երևան գալը բառակազմում կամ ծայրավորների միջև՝ բառամիջում, արտալեզվական ու ներլեզվական պատճառներով նրա կրած փոփոխությունները, մեղադատառ գրություններում ունեցած ոտղազրական պատմությունը և արդի փոճկում ընդգրկված իրողություններն է վերահանվում Սիլվա Մրնասյանի «Յոսավորումը հայերենում» գեկույցագրում:

Բառագիտության բաժնից են Սիլվա Պապիկյանի «Հայը խորհրդանշող ստորագրային մի քանի անվանումների շուրջ», Հասմիկ Պետրոսյանի «Գիտատեղանիական տեղանիաբանության հասկացման ուղիները հայերենում. պատճենումը որպես տեղանիակերպման ներքին ուղի», Գուրգեն Բաղդասարյանի «-վ- ածանցի բայականական գործառնության սկզբնավորումը հայերենում», Հայկանուշ Մանուկյանի «Պահեցողության առնչվող բառերը հայերենի բարբառներում, Շուշան Մաղսյանի «Երկարատև բարդությունները Փափսոս Բուզանի» «Հայոց պատմություն-ում», Մելադա Աղաբեկյանի «Դիտարկումներ հայերենի հնագույն փոխառությունների վերաբերյալ», Ալիզավետա Միրզոյանի «Գրաբարյան բառածնների գործառնությամբ Ղարաբաղի բարբառի բառային կազմում», Լարինե Հակոբյանի «Արցախյանայ արդի մետոլի բառապաշարի մի քանի առանձնահատկություններ» (առ ևս ոճագիտության է վերաբերում), Անահիտ Մկրտումյանի «Չիարմահալի խոսվածքի բառապաշարի և մի խումբ բառափանդումների շուրջ» լեզմաները: Բառագիտության առնչվող բառարանագիտական լեզմաներ են Լավրենտի Հովհաննիսյանի «Հայ թարգմանական գրականությունը և գրաբարի բառարանագրության խնդիրները», Նազկի Հովհաննիսյանի «Որոշ դիտարկումներ XVII դարի նույնահիշների ձեռագիր բառարանների վերաբերյալ» և Արմեն Սարգսյանի «Բարբառային բառարանային աղոթական պահանջները» աշխատանքները:

Սիլվա Պապիկյանը, ձեռքի տակ ունեցած բառարանների հիման վրա, քննարկել է *յարը* խորհրդանշող ստորագրային անվանումները, որոնք, զավոր, բավականին թիվ են կազմում (ազգաբուն, ազգայն, բեռնեցնող, բնիյար, խաղաձանի, հեշմակ, մամոնա, նեռ, սաղայն, ստտանա՝ չհաշված մի շարք բուն հեղափոխական բառայիններ): Հասմիկ Պետրոսյանը փորձել է *փոխառությունների թարգմանական և պատճենման* հասկացությունների բառակերտական առանձնահատկությունները առանձնազատել, Գուրգեն Բաղդասարյանը ձգտել է -վ- բառակազմական ածանցի սկզբնավորումը հայերենում ճշտել ու հետագա գործառնությամբ ցույց տալ, Հայկանուշ Մանուկյանը գրաբարած հարուստ նյութերի քննությունից ելքահանել է տոնականի արժեք ստացած պահեցողությանը վերաբերող բառերի, դարձվածների հայերենի բարբառներում լայն կիրառություն ունենալուն, որոնք մատնաշում են դրանք հանդիպել եղած չկան ու գիտակից վերաբերումներ: Շուշան Մաղսյանը, Փափսոս Բուզանի պատմության մեջ գործածված երկարատև բարդությունները համակողմանիորեն քննարկելով, գտել է, որ դրանք բավականին թիվ են կազմում ու հարուստ նյութ են լեզվաբանական ուսումնասիրությունների համար: Մելադա Աղաբեկյանը, փաստալիքով գիտական ճշգրիտ սակավ հետազոտություններ, փորձել է եղած հնչյունական օրենքների համապատասխանությունների հիման վրա հաստատել հնագույն փոխառությունների ժամանակագրության վերաբերյալ իր տնտեսկյունները: Ալիզավետա Միրզոյանը, համադրելով ու հակադրելով գրաբարյան ու արցախյան բարբառի նույնարմատ բառածները, ձգտել է հնարավորին չափ ցույց տալ գրաբար և բարբառ փոխառաբերությունները: Լարինե

Հակոբյանը բնագրային օրինակներով ցանկացել է հաստատել արգելալան մամուլի բառապաշարի հարստությունն ու բառային նորաստեղծական արտահայտությունները, իսկ Անահիտ Մկրտումյանն անդրադարձել է Չարմահայի խոսվածքում գործածված կտորեղենի անվանումների բառարանությանը: Բառարանագրության նկատմամբ առաջադրվող նոր խնդիրների են անդրադարձել Լավիենտի Հովհաննիսյանը (գրաբարյան բառամիջոցներ ընդգրկող բառարաններից բացի թարգմանական գրականության բառարանագրման կայացման կարևորությունը) և Արմեն Սարգսյանը (Արցախի ամբոջակա բառապաշարն ընդգրկող կատարյալ աշխատանք), իսկ Նսզգիկ Հովհաննիսյանը, որը դիտարկումներով անդրադառնալով XVIII դ. ծննդագիր նոյնանիշների բառարաններին, փաստել է մի շարք բառերի իմաստային տեղաշարժերի նկարագրություններ՝ ակնհայտ դարձնելով նման բառարանին յուրահատուկ սկզբունքի շնորհիվ:

Նշված գիտաժողովում հայոց լեզվի քերականության բաժնին վերաբերող թեմաները հիմնականում ձևաբանությունից էին, որոնց մեծ մասը վերաբերում էր բային: Օրինակ՝ Շաղեր Մինասյանը հանգամանորեն քննարկել էր ներգործական սեռի բայերի մի շարք առանձնահատկություններին ծավալուն, բայց նոր քննության կարող էր հարցեր. հատկապես կապված կրատիկական ածանց չտառնալու (գրաբարից եկած պակասափոք բայեր) կամ դեռևս խոսքում քերականական այդպիսի օրինաչափությունը՝ առաջագործություն չունեցողներ (*համադրական*՝ պարզ, բաղադրյալ բայեր, *հարադրական*՝ սովորական ու դարձվածային իմաստներով բայեր): Ընդհանրապես՝ կեն դարուց ավելին է, ինչ հայերենի ամենաշատ իմաստաբանական ու քերականական տեղաշարժ ունեցած խոսքի մաս բայը հանգամանորեն բառարանագրված ու այդ տեմաներով քննված չէ, որը հավասարաշաղկ գործուն պահանջարկ ունի ձևաբանության ու շարահյուսության մի շարք թեմաների համար: Հասմիկ Ղազարյանն ուշադրություն քննել էր գրաբարում ու ժամանակակից հայերենում իմաստաբանական նրբություններով գործադրվող նդանակափոխող բայերին (այդի հայերենի ձևաբանության ու շարահյուսության համար ևս այս հարցը կարող է մանրամասն ուսումնասիրության): Բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը Ղառաբարի բարբառում թեմային էր անդրադարձել Ժաննա Միրախյանը, համիրը կարևորելով նրանց ձևը բերած կերպաժամանակային նոր իմաստային նրբանգններն ու արտահայտության ձևերը: Արդի հայերենի խոսքամասային փոխանցումները չթերփոխելի համարվաբոմ ծավալուն թեման էր ներկայացրել Նունե Խաչատրյանը՝ անդրադառնալով *մակբայ-վերաբերական*, *մակբայ-կապ*, *շաղկապ-վերաբերական*, *կապ-շաղկապ* խոսքի մասային նրբանգնություններին: Լեզվի ոճագիտության բաժնից մեկ զեկուցում է Լեյլի, որի հեղինակը Աշոտ Գալստյանը, գերադասումով կերպարական ժանրի մի քանի առանձնահատկությունների է անդրադարձել: Դրանք են *ինքնախոսություն*, *երկխոսություն*, *ինքնահարգադրումներ*, որոնք կարևոր են դիմանկար-բնանկարների տիպականացման ու գրույց-վերաբաղությունների աղբյուրագիտական հավաստումների համար:

Արդի գիտական կերպար խնդիրների աղերսով զեկուցումների թվոր թեմաները գուցակցվել են տարաբնույթ հարցադրումների ու ստացել համապատասխան լիարժեք մեկնություններ՝ առավել արագաբանելով առաջադրված թեմաները: Այնհայտ էին կազմակերպիչների ու ընդգրկված մասնագետների միջոցառումների վերաբերումները հայերենագիտական այդպիսի պատասխանատու միջոցառման նկատմամբ և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ունակությունների աներկբայությունը:

Резюме

С 15 по 18 августа 2008 г. в Степанакерте состоялась восьмая Международная научная конференция по арменистике (армянский язык-фонетика, лексикалогия, морфология, стилистика), где были заслушаны 22 доклада по истории армянского языка. Тема каждого доклада являлась самостоятельным научным изысканием.

Գրականություն

1. Հայոց լեզվի պատմության հարցեր (Միջազգային հայերենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ), Մոսկվանակերտ, 2008, 112 էջ:
2. Արախումյան Ս. Ա., Մեր լեզուն և մեր դպրոցը, Եր., 2001:

Արթուր Հ. Հայոց լեզվի ու նրա դասականի մեթոդիկայի ամբիոն